Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-625-03.10.2014,05.11.2014-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի «50000 դրամ» բառերը փոխարինել «55000 դրամ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 2-րդ հոդվածի՝

1. 2-րդ պարբերության «300 դրամ» բառերը փոխարինել «330 դրամ» բառերով.
2. 3-րդ պարբերության «334 դրամ» բառերը փոխարինել «367 դրամ» բառերով.
3. 4-րդ պարբերության «500 դրամ» բառերը փոխարինել «550 դրամ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 4-րդ հոդվածում «չափի» բառը փոխարինել «, գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար սահմանված ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափերի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն Օրենքի 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից: